C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

No. 20

20.06.2023

Ֆրանսիայի Օվերն-Ռոն-Ալպ շրջանի նախագահ Լորան Վոքիեի գլխավորած պատվիրակության այցը

2023 թվականի մարտի 28-ին կենտրոնը հյուրընկալեց Ֆրանսիայի Օվերն-Ռոն-Ալպ շրջանի նախագահ Լորան Վոքիեի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին Վալանսի քաղաքապետ Նիկոլա Դարագոնը, Վիեննի քաղաքապետ Թիերի Կովակսը, Դեսին-Շարպիոյի քաղաքապետ Լորանս Ֆոտրան և այլ պաշտոնատար անձինք:

Ընդունելությանը հայկական կողմից հրավիրված էին Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը և այլ պաշտոնատար անձինք:

Հյուրերը շրջայց կատարեցին հաստատությունում, այնուհետև կատարվեց հրուշակագործության նոր լաբորատորիայի խորհրդանշական բացման հանդիսավոր արարողությունը, որի ստեղծման գլխավոր ֆինանսական աջակիցներից մեկը Օվերն-Ռոն-Ալպ շրջանն է:

ՍԵՊՖԱ-ի ուսանողները հյուրերին ֆրանսերենով ներկայացրին իրենց կատարած աշխատանքները, իսկ ապագա դերձակները հանդես եկան իրենց պատրաստած հագուստների գեղեցիկ ցուցադրությամբ:

Լիոնի քաղաքապետ Գրեգորի Դուսեի այցը

Կենտրոնն ընդունեց Լիոնի քաղաքապետ Գրեգորի Դուսեի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակության կազմում էին փոխքաղաքապետ Սոնիա Զդորովցոֆֆը, Լիոնի մետրոպոլի փոխնախագահներ Էլեն Դրոմենը և Պիեր Աթանազը,

Լիոնի հայ համայնքի տարբեր ասոցիացիաների անդամներ:

Հարկ է նշել, որ Լիոնի քաղաքապետարանը կենտրոնի հիմնադիր անդամ է, իսկ այցի ընթացքում տեղի ունեցած Հոգաբարձուների խորհրդի նիստի ժամանակ Լիոնի մետրոպոլն ընտրվեց կենտրոնի ՀԽ անդամ՝ իր աջակցությունը հայտնելով կենտրոնին նոր ծրագրերի իրականացման գործում:

Պատվիրակությունը ծանոթացավ ուսումնական կենտրոնի գործունեությանն ու ռազմավարական ծրագրին, ապա համագործակցության հուշագիր կնքվեց Հայաստանում Ֆրանսիական համալսարանի հետ:

Հայաստան կատարած այցի ընթացքում Լիոնի քաղաքապետը նաև վկայականներ հանձնեց կենտրոնում դասընթացները հաջողությամբ ավարտած Զինվորի տան շահառուներին:

Այցի շրջանակում Լիոնի քաղաքապետը կենտրոնի բակում ծառ տնկեց՝ ի հիշատակ Ֆրանսիայում Հայկական հարցի պաշտպան Ժյուլ Մարդիրոսյանի:

Հուշագրի կնքում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի և Ռոնի մասնագիտական կրթության ընկերության (SEPR) միջև կնքվել է համագործակցության հուշագիր հետագա ծրագրերի առաջխաղացման և զարգացման նպատակով:

Տարբեր կառույցների հետ հուշագրերի կնքումը նպաստում է կենտրոնի առաջխաղացմանը և կապերի ընդլայնմանը:

Մատուցողների վերապատրաստում

ՔՈԱՖ-ի՝ Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում 30 լոռեցի կանանց տրամադրվել է խոհարարական արվեստի և ռեստորանների կառավարման ինտենսիվ վերապատրաստման հնարավորություն:

Մատուցողների վերապատրաստման դասընթացներն իրականացվել են կենտրոնի արտադրական ուսուցման վարպետ Արուսյակ Գրիգորյանի կողմից: Դասընթացներն ընթացել են տեսական և գործնական փուլերով, որի արդյունքում շահառուները կատարել են անհատական աշխատանքներ, ինչն ավարտվել է գործնական քննությամբ: Դասընթացի ավարտին ծրագրի շահառուներին շնորհվել են վկայականներ:

Վերապատրաստումներ անձնակազմի համար

Ֆրանսիայից ժամանած ՍԵՊՖԱ գործընկեր ՍԵՊՌ կազմակերպության խոհարարություն և Մատուցում մասնագիտությունների դասավանդողներ Ժան-Ֆրանսուա Ժյուլիան և Քրիստոֆ Զիոնը իրականացրին երկշաբաթյա վերապատրաստում կենտրոնի խոհարարություն, հրուշակագործություն և մատուցում դասավանդող վարպետների համար:

Դասընթացներն ընթացան տեսական և գործնական փուլերով, որի ընթացքում կենտրոնի դասավանդողները ծանոթացան ոլորտի ժամանակակից մեթոդներին և նորարարություններին, կատարելագործեցին իրենց մասնագիտական հմտությունները, ինչպես նաև կատարեցին փորձի փոխանակում գործընկերների հետ:

Մասնագիտական սեմինար վարսահարդարների համար

Prof Shop Academy-ում տեղի ունեցավ երկօրյա սեմինար Nouvelle Lively ապրանքանիշի թեմայով: Այն վարեց Իտալիայից ժամանած վարսահարդար մասնագետը:

Սեմինարն ընթացավ 2 փուլով. առաջին փուլը տեսական դասախոսություն էր, որին մասնակցեցին «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները, իսկ 2-րդ փուլը գործնական բնույթ ուներ. նոր

ապրանքանիշը փորձարկվեց նաև կենտրոնի վարսահարդար դասախոսների կողմից:

Հանդիպում ֆրանսիացի հայտնի շեֆ-խոհարարների հետ

«Խոհարարական գործ» և «Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտությունների ուսանողադասախոսական կազմը կենտրոնում հյուրընկալեց ֆրանսիացի հայտնի շեֆ-խոհարար, Միշլենյան 3 աստղ ունեցող Les Clos de Cimes ռեստորանի սեփականատեր Ռեժիս Մարկոնին և ֆրանսիահայ շեֆ-խոհարար, Միշլենյան 2 աստղ ունեցող L'Alexadrin ռեստորանի սեփականատեր Ալեն Ալեքսանյանին:

Կիսվելով իրենց հաջողված փորձով՝ վերջիններս խորհուրդ տվեցին ուսանողներին ուսումնառության ընթացքում ձեռք բերված գիտելիքները ծառայեցնել հետագայում մասնագիտական աշխարհում սեփական «ձեռագիրը» կերտելուն: Նրանք պատասխանեցին նաև ներկաներին հետաքրքրող հարցերին՝ տալով ոլորտին վերաբերող մոտիվացնող պատասխաններ:

Այց ԵՊԲՀ Ստոմատոլոգիական գերազանցության կենտրոն

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողները դասավանդողներ Լ.Պապյանի և Է.Սարգսյանի հետ այցելեցին ԵՊԲՀ Ստոմատոլոգիական գերազանցության կենտրոն, ծանոթացան ապագա բժիշկների գործնական աշխատանքներին, ինչպես նաև մասնակցեցին թերապևտիկ և օրթոպեդիկ ստոմատոլոգիայի դասընթացներին:

Այցի արդյունքում ուսանողները կարողացան գործնականում տեսնել ստոմատոլոգ- ատամնատեխնիկ համագործակցությունը, ինչը կարևոր է նրանց հետագա աշխատանքի համար:

Վարպետության դաս

Կենտրոնը հյուրընկալեց ՍԵՊՖԱ շրջանավարտ, Smart Labs-ի կերամիստ Քրիստ Թաշճեանին և նրա գործընկեր Նարեկ Մայյանին, ովքեր վարպետաց դաս անցկացրին ատամնատեխնիկ ուսանողների հետ՝ «Ցերկոնե և մետաղ-կերամիկական կոնստրուկցիաների պատրաստում» թեմայով. ուսանողները զուգահեռ մասնակցեցին գործնական աշխատանքներին:

Հատկանշական է, որ ՍԵՊՖԱ շրջանավարտները ևս ակտիվ ներգրավվածություն ունեն իրենց աշխատանքային փորձն ու գիտելիքները կենտրոնի սովորողների հետ կիսելու, կենտրոնի զարգացմանը նպաստելու գործում:

Կանանց միջազգային օր

Մարտի 8-ին ընդառաջ՝ կենտրոնի ՈՒԽ կազմում գործող Մշակույթի և Բանավեճի ակումբների և Երևանի Ռ.Մելիք-յանի անվան պետական երաժշտական քոլեջի ՈՒԽ-ի համատեղ ջանքերով կազմակերպվեց Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում-բանավեճ «21-րդ դարի կինը, իրավունքները և խնդիրները» խորագրով: Միջոցառման ընթացքում նաև հնչեցին գեղեցիկ երաժշտական կատարումներ:

Կենտրոնը մշտապես կարևորում է և ողջունում հասարակության մեջ կանանց դերի բարձրացման, գենդերային խտրականության դեմ ուղղված նախաձեռնությունները:

Զբոսաշրջության համաշխարհային կոնֆերանս

Մարտի 6-8 զբոսաշրջության թեմատիկ թիմերի շրջանակներում Իտալիայի Պիեմոնտի շրջանի Ալբա քաղաքում տեղի ունեցավ EfVET ցանցի կողմից կազմակերպված կոնֆերանս Apro Formazione ուսումնական կենտրոնում: Կոնֆերանսին մասնակեցին ավելի քան 50 պատվիրակներ 14 երկրներից, որոնք հավաքվել էին քննարկելու զբոսաշրջության, թվայնացման, շարժունության և կայունության վերաբերյալ մասնագիտական ուսուցման ապագան:

Որպես EfVET ցանցի անդամ՝ կենտրոնը ևս մասնակցեց համաժողովին՝ ի դեմս հիմնադրամի տնօրեն Գոհար Գրիգորյանի:

SHUTTLE. ծրագրի ավարտ

Action Against Hunger կազմակերպության կողմից՝ «Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում» (EPIC) ծրագրի համագործակցության շրջանակում կազմակերպված «SHUTTLE» մեթոդաբանությամբ իրականացվող դասընթացը մոտեցավ իր տրամաբանական ավարտին: Փակման արարողությանը ծրագրի մեջ ընդգրկված դասընթացավարները ներկայացրին հաշվետվություն 4 ամիս տևած ծրագրի փուլերի, հաջողությունների և ձեռքբերումների մասին: Մասնակից ուսանողները ևս ներկայացան իրենց կարծիքներով: Ծրագրի շահառուներին շնորհվեցին մասնակցության վկայականներ:

Հրաձգության ամենամյա մրցում

Երեբունի վարչական շրջանի թիվ 35 դպրոցում անցկացվեց Արմենակ Ուրֆանյանի հիշատակին նվիրված հրաձգության ամենամյա մրցում, որտեղ կենտրոնի Դերձակ Հ-2 խմբի ուսանողուհի Աննա Թադևոսյանը անհատական մրցույթում զբաղեցրեց 3-րդ մրցանակային տեղը:

Պատերազմի հերոս Արմենակ Ուրֆանյանի մայրը անձամբ հանձնեց մեդալները:

Շրջանավարտները Ուսանողության և երիտասարդության օրվան ընդառաջ

Ուսանողության և երիտասարդության օրը կենտրոնում նշանավորվեց շրջանավարտների ամփոփիչ միջոցառումով:

Վերլուծելով իրենց ուսումնառության տարիները՝ շրջանավարտներն ամբողջացրին իրենց ձեռքբերումները, հաջողությունները և հիշողությունները: Կարծիքներ հայտնեցին նաև ուսանողների ծնողները և դասախոսները:

Բաց դռների օրեր

Կենտրոնում առաջարկվող մասնագիտական ծրագրերին ծանոթանալու նպատակով կազմակերպվեց «Բաց դռների օրեր»: Ապագա դիմորդներին մանրամասներ ներկայացրեց Կարիերայի պատասխանատուն, ով նաև իրականացրեց մասնագիտական կողմնորոշում դրա կարիքը ունեցող անձանց համար:

Նոր մարտահրավեր

ԱԿՈՒ Եվրոպական ֆորումի (EfVET) կողմից հայտարարված մրցույթի շրջանակներում ՍԵՊՖԱ «Խոհարարական գործ» մասնագիտության առաջին կուրսի ուսանողները Ծառատունկի միջազգային օրվա կապակցությամբ իրականացրին հասարակական պատասխանատվության բարձրացմանը միտված ինտերակտիվ դաս-միջոցառում՝ «Երջանկությունը մեր ձեռքերում է» կարգախոսով:

Հարկ է նշել, որ մրցույթն ընդգրկում էր տուրիզմի, հյուրընկալության, հասարակական սննդի թեմատիկաները, որոնք պետք է պարունակեին մշակութային ժառանգությունը և էկոհամակարգը խթանող տարրեր՝ նվիրված որևէ իրադարձության կամ տոնի:

Միջոցառման շրջանակներում Armenia Tree Project բարեգործական հիմնադրամի աջակցությամբ կենտրոնի բակում 5 ծառ տնկվեց, ինչպես նաև նախատեսված հյուրասիրության համար օգտագործվեցին վերամշակված թղթով պատրաստված բաժակներ և ափսեներ, իսկ հանդիսատեսին կեղևազրկված մրգերի կեղևներից պատրաստված հյութ առաջարկվեց:

Մրցույթի արդյունքները պարզ կլինեն սեպտեմբերին. հաղթող թիմը հոկտեմբերին կմեկնի Հունաստան՝ ստանալու մրցանակը:

Ֆրանկոֆոնիայի օրեր

Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում Ավ. Իսահակյանի տուն-թանգարանում կազմակերպվեց համատեղ միջոցառում: Կենտրոնի ուսանողներ Մարիա Պապյանը և Աննա Աճեմյանը ընթերցեցին Ավ. Իսահակյանի «Սաադիի վերջին գարունը» ֆրանսերենով:

Ի նշան ակտիվ համագործակցության՝ թանգարանի կողմից կենտրոնի գրադարանին տրվեց գրողի «Աբու-Լալա Մահարի» պոեմը՝ երկլեզու թարգմանությամբ:

Գրքի տոն

Գրքի տոնի առթիվ ՈՒԽ մշակութային ակումբը կազմակերպել էր արդյունավետ ընթերցանության թեմայով միջոցառում: Խոսվեց գիրք ընթերցելու գաղտնիքների մասին, կազմակերպվեցին ինտերակտիվ խաղեր, փորձեցին կյանքում գրքի դերի կարևորությունը փաստել օրինակներով և մեջբերումներով: Արդյունքում եղան ուսանողներ, որոնք միջոցառումից հետո տուն գնացին գրքերով:

Career City Fest

Ապրիլի 28-29 կենտրոնը մասնակցեց Career City Fest 2K23՝ գործատուների փառատոնին: Այն համախմբեց աշակերտներին, ուսանողներին, մասնագետներին, ծնողներին, գործատուներին, կրթական կազմակերպություններին և պետական հաստատություններին:

Փառատոնի ընթացքում կենտրոնը ներկայացրեց իր մասնագիտությունները ապագա դիմորդներին, ինչպես նաև համագործակցությունների առաջարկներ ստացավ տարբեր գործատուների կողմից:

Տաղավարը ներկայացնող ուսանողներն ու դասախոսները նաև մասնակցեցին ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին վերաբերող մի շարք սեմինարների և քննարկումների:

«Երևանի գինու օրեր» փառատոն. ՍԵՊՖԱ-ի շրջանավարտ Հրակ Գուզույեանը Plate Trophy մրցանակակիր

Հայաստանի խոհարարների ասոցիացիան հունիսի 2-ին, 3-ին և 4-ին «Երևանի գինու օրեր» փառատոնի ընթացքում առաջին անգամ անցկացրեց «Հայաստանի Երիտասարդ-ուսանող խոհարարի մրցույթ 2023»-ը EventToura ընկերության, ՄԿՈՒԶԱԿ-ի, WorldSkills Armenia-ի, Երևանի քաղաքապետարանի և GIZ-ի աջակցությամբ:

Մրցույթի նպատակն էր Հայաստանի լավագույն երիտասարդ-ուսանող խոհարարի ընտրությունը, մասնագիտական որակավորման բարձրացման և փորձի փոխանակումը, ուսումնական հաստատությունների և գործատուների կապի ստեղծումը, լավագույն երիտասարդ-ուսանող խոհարարների՝ առաջիկա միջազգային մրցույթներում (YCO, WorldSkills) Հայաստանը ներկայացնելու համար նախապատրաստումը:

Այս մրցույթի շրջանակներում Հայաստանի Խոհարարների ասոցիացիան հրավիրել էր խոհարարական ոլորտի միջազգային ճանաչում ունեցող մրցավար-շեֆ խոհարարների՝ ապահովելով միջազգային չափանիշներին համապատասխան մրցույթի անցկացումը:

ՍԵՊՖԱ-ի շրջանավարտ Հրակ Գուզույեանը ևս մասնակցեց վերոնշյալ մրցույթին, որի արդյունքում զբաղեցրեց 4-րդ տեղը՝ դառնալով Plate Trophy մրցանակակիր:

Քայլարշավը որպես էկոտուրիզմի զարգացման հեռանկար

Դերթական համագործակցությունը կայացավ Ֆրանսիայի AFRAT ընկերության և կենտրոնի միջև տուրիզմի ոլորտում:

Ըստ այդմ՝ AFRAT ընկերության ֆրանսիացի կամավորականների առաջնորդությամբ կենտրոնի ուսանողներն ու դասախոսները սկսեցին քայլարշավներ ՀՀ մարզերում՝ զարգացնելու էկոտուրիզմը, ճանաչելու հայրենի բնաշխարհը:

Մայիս ամսից իրականացվել է 4 քայլարշավ՝ Սաղմոսավանքից

Հովհաննավանք, Ամբերդից Անտառուտ ուղղություններով:

Քայլարշավներն ունեին թեմատիկ ուղղվածություններ՝ լանդարտ և անտառ, որոնց արդյունքում ուսանողները կերտեցին արվեստի գործեր բնության մեջ, իսկ անտառի մասին շատ գիտելիքներ ձեռք բերեցին ֆրանսիացի կամավորականների շնորհիվ:

Միջմշակութային երկխոսությունը ֆրանսիացի գործնկերների հետ ուսանողների համար ուսուցողական և դաստիարակչական մեծ նշանակություն ունեցավ՝ դառնալով մի նոր մոտիվացիայի աղբյուր:

Ավարտական քննություններ